

Խաղ թվանշաններով

Արամը կարողանում է հեռախոսների համար ծրագիր գրել: Արամը գրել է ծրագիր, որը Էկրանին գեներացնում է թվանշանների հաջորդականություն: Հետո կարելի է մատով հպվել ցանկացած թվանշանի: Այդ դեպքում Արամի ծրագիրը ջնջում է այդ թվանշանը, իսկ հետո այդ տեղից աջ գտնվող թվանշանները տեղաշարժում է դեպի ձախ այնպես, որ դատարկ տեղ չմնա:

Հիմա Արամը մտածում է հետևյալ խնդրի շուրջը: Եթե պետք է հեռացնել k թվանշան, ապա առավելագույնը ի՞նչ թիվ կարելի է ստանալ: Օգնե՛ք Արամին, գրեք ծրագիր, որը լուծում է այդ խնդիրը:

Մուտք

Առաջին տողում տրված է գեներացված թիվը: Թվանշանների n քանակը չի գերազանցում 500 000-ը: Առաջին թվանշանը զրո չէ: Երկրորդ տողում տրված է k ($k < n$) թիվը:

Ելք

Պետք է արտածել մեկ թիվ՝ մեծագույն թիվը, որը հնարավոր է ստանալ k հատ թվանշան հեռացնելուց հետո:

Օրինակ

Մուտք.

2018

2

Ելք.

28

Մուտք.

127127

3

Ելք.

727